ՀԱՆԴԻՊՈՒՄ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, 11 հոկտեմբերի (ՏԱՍՍ): Այսօր Ստեփանակերտում տեղի ունեցավ Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Խ. Վեզիրովի և Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Ս. Գ. Հարությունյանի հերթական հանդիպումը:

Լսվեց կուսակցության Լեռնային Ղարաբաղի մարզկոմի առաջին քարտուղար Հ. Ա. Պողոսյանի հաղորդումը մարզում տիրող իրադրության մասին:

Հանրապետությունների ղեկավարները ինֆորմացիա փոխանակեցին իրավիճակի և այն խնդիրների շուրջ, որ Հայաստանի և Ադրբեջանի կուսակցական կազմակերպությունները, աշխատավորները լուծում են էկոնոմիկայում, սոցիալական ոլորտում լճացման երևույթները հաղթահարելու և գաղափարաբարոյական մթնոլորտն առողջացնելու նպատակով:

Առանձնակի ուշադրություն նվիրվեց Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի որոշումների կատարման ընթացքի քննարկմանը: Նշվեց, որ մինիստրություններին ու գերատեսչություններին, տնտեսական մարմիններին առաջվա պես խանգարում է ջանքերի և համաձայնեցված որոշումների պատշաճ կոորդինացման բացակայությունը: Ընդգծվեց այդ ամբողջ աշխատանքի կարևորությունը, որպեսզի ղեկավարվելով XIX համամիութենական կուսկոնֆերանսի որոշումներով, ապահովվի նշված ծրագրի անվերապահ կատարումը:

Նշվեց, որ ստեղծված իրավիճակում խիստ անհրաժեշտ է որոնել պրոբլեմների լուծման փոխզիջողական ուղիներ, ընդառաջ գնալ միմյանց, ելնելով ինքնավար մարզի բոլոր աշխատավորների և ամբողջ երկրի շահերից:

Հանդիպման ընթացքում նշվեց կուսակցական կազմակերպությունների մարտունակությունը բարձրացնելու, ազգամիջյան հիմքի վրա ծագող կոնֆլիկտների կանխման ընթացքն աշխատանքն ուժեղացնելու անհրաժեշտությունը:

Ընդգծվեց անկախ ազգային պատկանելությունից բնակչության անվտանգության ռեալ երաշխիքներ ապահովելու կարևորությունն ու անհրաժեշտությունը:

Հանդիպման մասնակիցները հանգեցին այն միասնական կարծիքին, որ պահի գլխավոր խնդիրն է հաղթահարել երկու ժողովուրդների օտարացումը, միջոցներ ձեռնարկել ռեգիոնի իրադրության շուտափույթ կայունացման նպատակով: ԼՂԻՄ-ի պրոբլեմները հնարավոր է լուծել միայն հանգիստ պայմաններում, հանդես բերելով ճկուն, կշռադատված մոտեցում, դիմելով փոխադարձ զիջման, ապահովելով դրանց լուծումը պայմանավորող բոլոր գործոնները:

Մեծ ուշադրություն նվիրվեց երկու ազգերի վերաբնակիչների պրոբլեմի լուծման միջոցառումների իրականացմանը:

Համաձայնություն ձեռք բերվեց Ադրբեջանի և Հայաստանի ղեկավարության ներկայացուցիչների հետագա հանդիպումների վերաբերյալ:

Ա. Խ. Վեզիրովը և Ս. Գ. Հարությունյանը եղան ԼՂԻՄ-ի Շուշիի և Ասկերանի շրջաններում:

Հանդիպմանը մասնակցում էր ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության ներկայացուցիչ Ա. Ի. Վոլսկին: